ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարույր Սևակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Պարույր Սևակ, (093)888278, paruyrsevak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 6

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09.04.2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածով Պարույր Սևակ համայնքի ավագանին

ո ր ո շ ե ց

Հաստատել 09.04.2019 թվականի նիստի օրակարգը՝

1. Պարույր Սևակ համայնքի 2018թ-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
2. Պարույր Սևակ համայնքում ֆիզիկական և իրավաբանական անձանց 2019թ-ի հողի հարկի և անշարժ գույքի գույքահարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը հաստատելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՌԱԴԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
4. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Համայնքի ղեկավար՝ **Էդուարդ Ստեփանյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարույր Սևակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Պարույր Սևակ, (093)888278, paruyrsevak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 7-Ն

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին .

ո ր ո շ ու մ է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Պարույր Սևակ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՌԱԴԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
4. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Համայնքի ղեկավար՝ **Էդուարդ Ստեփանյան**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

Պարույր Սևակ համայնքի

Ավագանու 2019 թվականի ապրիլի 9-ի N 7-Ն որոշման

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի համայնքի բյուջեի

եկամուտները կազմել են 25420000 (քսանհինգ միլիոն չորս հարյուր քսան հազար) դրամ, այդ թվում՝

1) սեփական եկամուտները ՝ 9983300 (ինը միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր) դրամ

2) դոտացիա՝ 15436700 (տասնհինգ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր) դրամ

Հավաքագրված եկամուտների ցուցանիշները ըստ հարկատեսակների ՝

555500 (հինգ հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր) դրամ հողի հարկի դիմաց հավաքագրվել և մուտքագրվել է 676400 (վեց հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր) դրամ՝ (121%).

2766000 (երկու միլիոն յոթ հարյուր վաթսունվեց հազար) դրամ պահուստային հողի վարձավճարի դիմաց ՝2273900 (երկու միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր) դրամ՝ (82,2%)

1050000 (մեկ միլիոն հիսուն հազար) դրամ գույքահարկի դիմաց՝1050000 (մեկ միլիոն հիսուն հազար) դրամ՝ (100%).

32000 (երեսուներկու հազար) դրամ տեղական տուրքերի դիմաց՝ 32000(երեսուներկու հազար) դրամ՝ (100%).

676000 (վեց հարյուր յոթանասունվեց հազար) դրամ վարչական գանձումների դիմաց՝ 1351860 (մեկ միլիոն երեք հարյուր հիսունմեկ հազար ութ հարյուր վաթսուն) դրամ՝ (199,4%),

2361000 (երկու միլիոն երեք հարյուր վաթսունմեկ հազար) դրամ՝ օտարման գումարի դիմաց՝ 3978500 (երեք միլիոն ինը հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր) դրամ՝ (168,5%):

2018թ –ի բյուջեի տարեկան պլանավորված և փաստացի կատարված ծախսերը

2018թ-ի բյուջեն ծախսային մասով պլանավորված՝ 25133459 (քսանհինգ միլիոն մեկ հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր հիսունինը) դրամի փոխարեն ծախսվել է 20677484 (քսան միլիոն վեց հարյուր յոթանասունյոթ հազար չորս հարյուր ութսունչորս) դրամ՝ (82,2%), այդ թվում

1) կառավարման ապարատ՝ 13310000 (տասներեք միլիոն երեք հարյուր տասը հազար) դրամ գումարից ծախսվել է 11930140 (տասնմեկ միլիոն ինը հարյուր երեսուն հազար մեկ հարյուր քառասուն) դրամ՝ (89,6%).

2) ջրային կառույցների շահագործում՝ 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ գումարից ծախսվել է 750000 (յոթ հարյուր հիսուն հազար) դրամ՝ (62,5%)

3) սոց.անապահով անձանց՝ 750000 (յոթ հարյուր հիսուն հազար) դրամ գումարից ծախսվել է 675000 (վեց հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ՝ (90%)

4) հանգիստ, մշակույթ, կրոն՝300000 (երեք հարյուր հազար) դրամ գումարից ծախսվել է 300000 (երեք հարյուր հազար) դրամ՝ (100%)

5) աղբահանություն և սան. մաքրություն՝ 884000 (ութ հարյուր ութսունչորս հազար) դրամ գումարից ծախսվել է 579800 (հինգ հարյուր յոթանասունիննը հազար ութ հարյուր) դրամ՝ (65,4%)

6) նախադպրոցական կրթություն՝3000000(երեք միլիոն) դրամ գումարից ծախսվել է 2980000(երկու միլիոն ինը հարյուր ութսուն հազար) դրամ՝ (99,3%).

7) ընդհանուր բնույթի հանրային ծառայություն՝ 2857679 (երկու միլիոն ութ հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր յոթանասունիննը) դրամ գումարից ծախսվել է 2208000 (երկու միլիոն երկու հարյուր ութ հազար) դրամ՝ (77,2%).

8) կոյուղի՝400000 (չորս հարյուր հազար) դրամ գումարից ծախսվել է 400000 (չորս հարյուր հազար) դրամ՝ (100%)

9) փողոցային լուսավորում՝ 900000 (ինը հարյուր հազար) դրամ գումարից ծախսվել է 843544 (ութ հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր քառասունչորս) դրամ (93,7%):

10) ընդհանուր բնույթի տնտեսական ծառայություններ՝ 11000 (տասնմեկ հազար) դրամ գումարից ծախսվել է 11000 (տասնմեկ հազար) դրամ՝ (100%):

11) աջակցություն հասարակական կազմակերպություններին՝ 70000 (յոթանասուն հազար) դրամ գումարից ծախսվել է 0 (զրո) դրամ՝ (0%):

Համայնքի ղեկավար՝ Է. Ստեփանյան